

ԲԱԶՄԱՎԵՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

1843-1895

ՀԱՏՈՐ ԵԳ ՀԱՏՈՐ

ՄԱՐՏ

ՀԻՆ ՀԱՒԱՏՔ

ԳԼ. Փ. - ՊԱՇՏՈՆ ԶԱՅՏՈՒԱԾՈՅ

(Տես յէլ 53)

Անէ. — Այս անուամբ ՅԵՐԱ
Կ' առապելեն յաւերժահարս մի,
զուստը Սանգարիս դեռոյ, և ողի
կամ զօրոթիւն ծննդարերութեան.

Սկանտինաւեան ազգերն այլ ունեին
զիցուհի մի՝ կին նաևնա բալտերայ, որդոյ
Ողինոփ, որ իրենց Ապոլոնն համարեւը. և
ըստ այսմ՝ մերձաւոր յունական Աթենասայ,
որ Արամազդայ ուղեղէն ծնած կոյս էր, ի-
մաստութեան և զիտութեանց և արիութեան
ազգով. յառաջ երբեմն այլ՝ ջրոց և շողեաց
շաստուած համարեալ: Հայք այլ Արամազդայ
զուստը համարէին զնանէ, և Աթենասայ
փոխանակ. վասն զի այսոր ճարտարարուեստ
անդրին՝ զոր Արտօչես բերաւ և Ցիգրան
զրաւ ի թիւն աւան, Ազաթանգելու՝ Նա-
նեական կ'անուանէ. Գլ. Լուսաւորի յառաջ
քան զերթան ի կեսարիս՝ կործանեց զօա,
իրեն մերձաւոր Անահիտ քրոջ հետ, և զուե-

ղին՝ գանձերովը սեփականեց կանգնելի ե-
կեղեցւոյ: — Նանէ կամ նաևն ծանօթ էր ու-
րի Ասիացւոց այլ, իրրեւ մայր շաստուածոց,
որոց լեզուաւ մայր կամ մամ նշանակէ սանոնն
այլ (Նանա, Նինէ): — Թիլ աւանէն զատ
սեղ չի յիշուիր ի Հայս մեհեան Նանէի, և
Երէզի Անահատէն տարբեր ըլլախն անսարա-
կոյս է. բայց ստարք շփոթեն զսա՝ երթեմն
Արտեմեայ երբեմն կիւրելէի հետ. մանա-
ւանդ ուր Ս. Գրոց մէջ յիշուին շաստուածք.
Բնակէս (Ա. Մակար. Զ. 4). յիշուի Ելի-
մայիսայ կամ ըստ մեզ Ամենայ մեհեանն,
որ էր և մեծագունձ յօյժ, և կուռք ոսկեղէնց
և ձուլածոյց մեծամեծը ի նմա ։ և յիրաւի
աստնց պիսաւորն էր Անահիտ. իսկ Բ. Մա-
կար. (Ա. 43. թ. 12) յիշածն ի Գարսա՝
ըստ մեր Թարգմանութեան, է Նանէ, որոց
գանձերը կողոպտել կ'ուզէր Անտիոքան, բայց
իր և անհամար զորքն անկան կործանեցան

» շուրջ գնանեայ տաճարաւն », և մայրաքաղաքին Պարսից՝ որ էր Պատարզաւ : Ասոնց Նանէն, ըստ վկայութեան Պլուտարքոսի, յաղթութեան շաստուած էր, և իր տաճարին մէջ պատկուէին թագաւորք . և բառ այս եւս դուզուի Աթենաս-Պալլասայ Յունաց :

ԱՅՏԱԿ. — Երրորդ դիցուհի Հայոց, մեծարեալ քան զերկրորդն (Նանէ), և թերեւա քան զամենքն սիրելի, ինչպէս և քան զամենքն աւելի ազգային . վասն զի թէ և ամանց զստ այլ Արամազդայ զուտոր կ'ըսեն ; բայց շփոթելով ըստ Անահաւայ . ազգային աւանդութեան համարի զԱստղիկ՝ սեփական հայ անուամբ և աննման օտարաց՝ զուտոր նոյի, զընեղեղէն վերը ծնուած, ինչպէս իր եղայրն այլ Մանհիուն . որոց հայոն ի՞նչ անուամբ կոչուէր յաստապելո Հայոց՝ յայտնի չէ . և եթէ նոյնպէս անյայտ կամ ընդունելի չէ նոյի զուտոր ըլլալն, հատանական է հին նոհապետի մի զուտոր ըլլալ, իրական անձն և ոչ մոտացածին : Բերսոսուեան Սիրիլլայն (Խորեն. Ա., 9) զբէ զԱստղիկ զուտոր զստեր Քօփսութերոսի, որ է նոյ, և հաշտարար նկարագրէ իր եղբարց՝ Տիտանայ և Յապետի կոտոր ասեն ընդ Զրուանայ, և ասոր զաւակներէն քանի մի ապրեցնելով տանիլ ձգելն յՈլլիւմպո լեռ, որ և ասոր համար Դիցընէկց կոչուի : Բայց Հայը աւելի հաջոցուցընեն զեղպարքն և զքյոյն, որ անոնց հաւասար ժառանգեց երկիր մի ի հարաւակողմ, ըստ ոմանց յերջանիկն Արաբիա : Սակայն այլքան հետու երթալու շեն թողած իրենց Աստղիկը, այլ պահած են Ցարօնոյ կողմերում, ուր առաջ բնակէին եղբարքն այլ . հօն է Աստղեաբերդն կամ Աստղկան բերդն, համառօտելով Ասղեներդ կոչուած, զոր նոյն ինքն Աստղիկ շինել տուած է կ'ըսեն, իր Զրուան եղբօր ապահովութեան համար . յետոյ ի պատմական ժամանակս՝ Մոկաց բերդ կոչւեցաւ . և է յարեւելեան կողմն Մշց յարեւմտեան կողմն այլ կայ ուրիշ Աստղերդ մի Հաշտենից զաւառին մօտ . անուշտ Անահաւայ պէս և սա այլեւայլ աթօններ ունէր Երանց վրայ : — Թիշուեցաւ իր կուրքն կամ պատկերն ի Պաշտառ լերին, Արամազդայ

կուոց քով, որոյ հետ և կու տօնուէր յամանորն Նաւասարդղի : Արոտաչս թ վանայ կողմերում իրեն զքօսարաններ շինելով՝ Արոտամուի քովերը կանգնեց Աստղկան տաճար, որոյ շատ պաշտօնասէր կ'երեւին ինքն այլ իր ընտանիքն այլ . և իր Ամթինիկ տիկնոջ համար կ'ըստի, թէ յետ լսելու իր ազգակից Սուքիատանց քրիստոնէ ական քարոզութիւնը, չիմրցաւ բաժնուուիլ Աստղկայ պաշտամանէն :

Գլխաւոր մեհեան զիցոււոյս էր ի Յաշտիշատ, մի յերից՝ որք մէկ անուամբ Վահե վահեան կոչուէին, և որոց մին այլ էր նախայիշեալ Ռակէծին Ռակէմօրն Անահաւայ, իսկ Աստղկան կոչուէր յասուուկ Աննեակ Վահագնի, որոյ նուիրուած էր երրորդն : Այս երկուքին պատկերքն այլ Յանաստանէն բերուած ըլլալով՝ անոնց Հերակլէն համարեցաւ Վահագնի ի Հայոց . Արոտպիտեայ անդրին այլ՝ Աստղիկ զասոնք՝ Տիգրան՝ իրը իրարու միրելիս քովէ քովէ կանենել տուաւ (խոր. Բ. ժ. Գ.): և այնունետեւ այս երկու զիցունեաց զաղափարն միանալով՝ Աստղիկ համարեցաւ հեշտութեանց գարշելի շաստուածն . զոր իր սիրականին և Անահաւայ հետ՝ փճացուց անհետ ըրաւ Ա. Գրիգոր, և անոնց աեղ կանգնեց Աշխարհամատորան տաճարը : Ագաթանցելուսի խօսքն այսպէս ընացինչ և իրը աներեւոյթ եղած ցուցընէ այս մեհեանը, որպէս գուշակուի, այն տեղ կատարուած անառակ պաշտամունք և հանչպէսները մոտցընել տալու համար . ինչպէս վարդան վ. ի ներրողի Լուսաւորչ՝ երգիծաբաննելով կ'ըսէ . « Աստղիկ՝ զքօզութիւնն առեալ փախչէր առ նմանին իւր » : Լամբրունեցին այլ ի մեկնութեան (Ա.է) Ապամոնի, « Արպէս պակասի ծովի », և այլն, այսպէս Քրիստոսի հրոյ զորութեամբ ջնջուած համարի . « զի թէ ոչ էր պակաս » սեալ, զքաղում ամաց մեհեանն շինեալ վաս » հետանեան Դիցն, և զիւօցն ի մարգիպին » հնարից պարսպեալ, Ա. Գրիգոր՝ ո՞րպէս » մի աետոնազբերով՝ կործանեալ անհետ առ բար » : Աւրիշ տեղ այլ (Զ, 14), « Ա. » Գրիգոր՝ զի ձգեաց զնեռն ի վահեանինն » մեհեան, և իրիւե զոյինչ՝ զամենայն զիեւան » : Արաւ քան յունական խայտառակ ան-

զրեաց բերուիլն՝ Աստղիան գաղափարն աւելի պարկիշտ կ'երեւի, և ըստ անուանն՝ լուսաւոր և պայծառ էակ կամ իր մի, հաւանօրէն Արուսեակն, և նման իմն Լատինաց Venus-Urania կոչածին, յետոյ՝ ուրախութեան, փափկութեան, հեշտութեան յորդորի մի դարձաւ. որոց յայտարար են և իրեն նկարագրոն՝ Ասէծիջ և Վարդամատն, որպիսի էին և Յունաց Արշալյոն և Հերա, և Ափրոդիտեայ նուիրեալ վարդն. զոր և Հայք նուիրէին իրենց Աստղիան, Վարդավար ընելով և կոչելով, և մեծամեծ հանդէներ կատարելով իրենց բարեկենպանին ատրայն վերջը Աւելիաց օքրուն, որ է սկիզբն օգոստոս ամսեան, երբ Հայոց բարձրաւատնպահաց վրայ զեռ զարդնանային զոլութիւն գտուի: Վանական Վ. շփոթութեամբ իմն (ըստ զրաւածոյն սխալ օրինակուելէն), այս ամսը Քրիստոսի Խաչելութեան յիշատակէն 40 օր առաջ էր Կ'ըսէ, իսկ քրիստոնեալը 40 օր վերջը դրին յԱւելիակերպութեան տօնին, խափանելով Աստրդիան և Հեփեստոսի կամ Միհրայ պիղծ տօները, և անոնց հեա մէկտեղ Արեգական և Լուսին կրօնական յիշատակներն այց ։ Ս. Գր. Լուսաւորի ինչն պատուիրեց, կ'ըսուի, այս հեթանոսական մեծապայծառ տօնը փոխանակել յամենապայծառ երեւումն Քրիստոսի ի Թարար լերին:

Միջը, Միթրզ. — Այս անոնս պարսկական լսուի. վերջի մասն հայերէն հուրդ յիշեցնէ, ինչպէս ինքն այլ հոյս և արեգական շաստուած համարուէր, նոյնպէս և ի Յունաց՝ Հեփեստոս կոչմամբ. և առաւել քան շատ շաստուածոց իր պաշտօնն ատրածուած էր յարեւել և յարեւուսուս: Այս եաքի (Երրոպական) մասին մէջ ոչ միայն Յունաց և Լատինաց կողմերում այլ և ի Գերմանիա գտուին Միհրական կոշուած քանդակը. և ինչուան իուզանացոց գերազոյն շաստուածն՝ կոչուէր Մակեր-աս: Յարեւել՝ Միհրայ պաշտօնն նշանն կան Փ. Ասիոյ մինչեւ ի Հընդկաստուան: Այս մեծ այլարհիս մէջ Միհրա անուանէր Արեգակն, կամ մին 42 արեգակնազանց՝ որ Աստիիյաս կոչուէին: Մեր Ե զարու մատենապարաց՝ Եզնըլիյ, Եղիշէի, Խորենացւոց ընթերցողք՝ յիշեն ասոնց զրած.

Ները և Պարսից Միհրայ ինչ ուլալուն բացարութիւնը. անոնցմէ առաջ Ս. Հարք այլ յիշեն, մանաւանդ Գր. Աստուածաբանն, որոյ ճառից մեկնիչն Նոննոս՝ զրէ. և Միթրոս և կարծի ի Պարսիցն՝ Արեգակն զոլ, և զո՞ն առոնէին նման և կատարէին. արդ ոչ կարէ ոք ձօնել նման եթէ ոչ յառաջազոյն ընդ աշոտինան ատանջանաց անցանիցէ, և աշոտինան թուութեան թուուլ ութաւուն ։ Աշոտինաներն՝ յայտ է թէ ինչպէս արիշ կրօնից և աղանդոց մէջ այլ կան, նոր ժամանակաց աշակերտութեան կամ նույրապետութեան կարգաց զուգուին, մի քան զմի բարձրազոյն, ըստ կրթութեան և գիտութեան հետապոցն: Նոյն հեղինակ արիշ տեղ այլ կ'ըսէ. « ԶՄիթրոսէ այլեւայլ տան կարծիս. » Քանզի Արեգակն զնա զոլ ասէին, և ա մանց վերատեսուչ Հրոյ, և այլ յատուկ ինչ զոլ զորութիւն. լինէին և Միթրոսի տեղ Էւդր սմանց (պաշտօնատէլք), և մանաւանդ առ ի Քաղղէացոցն. քանզի ոք ասուարեալ կամէին լինել՝ տանջանաց կարօտանային, ըստ աստինանաց ի վեր ելեալք, ի թեթեւազունիցն տանջանացն սկսեալ՝ ի գմնակազօյնն կատարէին. յան աշազոյն՝ սովոր ճնշել զանձինն իրեւ աւուրս 50. և յայնմ ժուկալք՝ ի քերանս արկանէին աւուրս երկու, ապա ի ձեռան կաս ցուցանէին աւուրս 20. յետոյ ի հոր անս ցուցանէինն և զարըմբերն որ կատարեալն և եղեւ՝ հասուցեալ այնուհետեւ ի կատարելաւ ոգոյն տելեսոն » (կարգէին): և կերպիչեալ Միհրական քանդակը (Mithriacques) կերպարանն զՄիհր՝ երիտասարդ հայաբրակ կամ փոխագագրակ՝ ցոլի մի վրայ հեծած, կամ մնկոլ կաթենած, զոր կ'ուզէ փողոսել, քարայրի մի մէջ. օձք, կարինք, մրջինք ցըլոյ ներքին անդամոց վրայ փակչին. քովը կայ շուն մի, վերը՝ Քաջ մի՝ երկու ջահ ի ձեռափն, մէկն վերամբարձ միւսն զէպ ի վայր. այս ամենքն այլ յայտնեն տարոյ եղանակներն արեւու շրջանով, զիշերն ու ցորեկը:

Զրաբեշտական կրօնից մէջ Միհր Որմզզիք ճնունդ էր, ոչ շաստուած, այլ Ազատ մի և զինաւորն Ազատաց, մինորդ Որմզզիք և Ահերմէնի, բայց յետոյ ոչ միայն շաստուած մի

համարեցաւ՝ այլ գրեթե և բալոր աստուածութիւն. բայց այլանդակ կերպով աստուածուցեալ, ինչպէս ծաղրելով կ'ըսէին Հարք մեր ի պատասխանելն առ Միհրներսէն զգուկ Պարսից. և Ես ոմն քաջ ի ձերոց իմաստնոցն ա ասաց, եթէ Միհրն աստուած մայրածին է և ի մարդկանէ և թագաւոր աստուածազաւակ » է, և համհարզ քաջ եօթներորդաց ս, և այլն։ Աւելորդ համարիմ այս առասպեկլաց առասպեկները քննել, վասն զի առոնց հին Պարսից և Հայոց հաւատըն չէին՝ այլ Սասանեանց. իսկ հինձրն՝ ինչպէս վերն ըսինք, արեգական, կրտակ, եղանակաց աեւառ ոգի մի համարէին զՄիհր, որոյ նուիրեալ էր մարտ ամիսն, նու և ամսոց ժջ օրն, և որիշ քանի մի առանձիւ օրեր։

Ինչպէս նախայիշեալ շատառածոց հաւատըն և կերպարանքն այլայլեցան կամ խառնուեցան ընդ յունականաց, երբ առոնց կաւաքերն բերուեցան ի Հայոց, Հեփեւատուն այլ զոգեցան ընդ Միհրայ և ընդ Վշտիկանի լատօնաց, և եղաւ որդի Արամազդայ. Գուցէ « ոչ բնութեամբ՝ այլ կոչմամբ ս, ինչպէս Նոննոս կ'ըսէ Միհրայ աելեւտաց համար : Այս արեգակնային հրային շատառածոյ կուըն կանգնեցան ի բազառին՝ ի Դերջան գաւառի սահմանակցի Եղեկնեաց և Դարանաղեաց, ուր՝ զիւղին անունէն գաւակուի՛ թէ արդի կոոց բազիներ այլ կային. և Ա. Գրիգոր և Գայոց հասանէր ի Մըրհան կան մեհեանն անաւանեալ որդոյն Արամազդայ գայ, և . . . ի հիմանց բրեալ խլէին, և զգանձս և մթերեալ աւար հարկանէին, և աղքատաց ո բայցիէին, և զտեղիսն նուիրէին Եկեղեւոց » ։ Այս մեհեանին աելոն հիմայ կարծուի թէ ըլլայ նոյն անոնը պահող զիւղին մէջ բարձրացած քարարլըյն արեւելակողմը, որ երեք փոքր քարանճառ փորուած են, գուրսն այլ զաւիթ. ի գազաթն բլրոյն կ'երեւան հրամանց նշանք, ուր որ բուն բագինն եղած համարուի : — Միհրայ տօնին ժամանակն չի յիշափր ի մերայոց, բայց թուի յլլերեց ամսեան՝ որ պատշաճի Պարսից Միհր ամսոյ. յարեւմնաւս, գոնէ յիտայիտ, ի 25 զիւղեմքերի կատարուէր. որոյ փոխան ուզգանաւատը Քիթասափի ծննդեան նուիրեցին այն օրը, որոյ և մարդկաթեան օրն՝ հանդիպի գարնանա-

մարի օրերուն : — Միհրայ պաշտօնասիրովթեան մէկ նշանակին, մնացեալ և յետ անոր հաւատոցն, է նոյն անուամբ բարդեալ յատուկ անձանց անուններն ի Հայո, ի Վիրս և ի Պարս. որպէս, Միհրան, Միհրներսէն, Միհրանշապուհ, Միհր — Արտաշէս, Միհրազատ, Միհրիշատ, Միհրնորիկ, և այլն :

Տիր. — Սա թէպէտ նախայիշեալ շասաւածոց պէտ յանձնախ յիշուած չէ, բայց և ոչ աննշան, թէ առ արեւելեայս և թէ առ հիւսիսայինս, թէ և այլեւայլ կերպով ճանցցուած ըլլայ : Յանաց՝ Հերոէս և Ավորոն զից զատշանի. կելտաց և Սկանզինաւեանց՝ Տիր կամ Տիրա (Տյր) պատերազմի ոզի է, ինչպէս և Տի՛ Ֆրիզոնաց, Զիոյ Առեւտաց. մեր լեզուաւ այլ Տիր՝ ուժոյ, պնդովթեան, քաջութեան նշանակ է Պարսք Տիր կոչեն նետը, և ըստ աստեղարաշխութեան՝ Փայլածու մոյլորուկը և Դաշտէկ աստղը, և երկրիս արեւելեան կոզմի պահապան ոզին, զարձեալ, պաշտպան ամսոց ժգ աւուր, որ հանդերձ տօներով՝ Տիրական կ'ըսուէր. և ամբողջ զեկաթեմբեր ամսոյ, ինչպէս առ Հայո այլ՝ Դ ամիս տարւոցն Տրէկ կամ Տրեայ կոչուի : Մեր դրացիքն՝ ամսոց և անձրեւաց հոզզող այլ ճանչնային զծիր : Բաց յանուանէ ամսոյն առ մեր զատիք և Տրեայ գեօլ, Տիր — ասիմ զիւղ, Տիրինկատար լեռն՝ զոր յիշեցինք՝ իր Անահաւայ նուիրեալ, և շաա յա. տուկ անուանն մարդկան, Տիրան, Տիրոց, Տրդատ, Տիրատուր, և այլն : Այս ամեն յայսոնէ որ Տիր ունէր բաւական սերու պաշտօն ի Հայո, և համարէր գիտովթեանց, զարութեան, պերճակատովթեան ապկեցոր կամ պաշտպան : Յունաստանէ բերուած Ավորոնի պղնձաձոյլ ոսկէզօծ անդրին յԱրմահիր կանգնած և յետոյ յԱրաւանա, Ավաթանգեղ Տիր կամ Տիւր կոչէ, տեղն այլ քաղքէն գուրմ զրանը մօտ համբուն լիայ. և յատկաթիւնն այլ՝ « Դիբ զպրի զիտովթեան քրամաց ս, մեհեանն այլ՝ « անուանեալ զիւան գրի Ուր » մըզգի ուսման ճարտարովթեան մեհեան » : Ուշափ այլ այս բառերուս շաքրն քիշ մի շփոթեն իմաստար, այլ բաւական են յայտնելու որ գիտովթեանց իմամակալ էր և Արամազդայ զպիր, որպէս Հերմեսն Յանաց

Մերկու լատինաց՝ պատգամաւոր և զպիր էին Դիոսի, և Դիր - թէկէրն վլց յԱ Պարսից՝ բաղզի և երկնագնատի ոստիկան և գիտնոց : - Գործոց Առաքելոց սրբազն դրոց մէջ այլ՝ ուր յիշուի Հերմէս (որուն նմանցուցին հեթանոսի զառաքեալն Պօլոս՝ ճարտարին սութեանը համար), մեր ձեռագրաց ունաց լուսանցըը զրուած է Տիր դիք, — Հերմէս ոչ միայն ճարտարախօս էր, այլ և հնարիխօս իրամ պատգամախօս, ամենուն պիտոյից յարմար բան ըսող, միով բանիւ Հարցուկ, և տարակյուներ ու երազներ լուծող, որոյ համար և յունարէն կոչուէր. Օւերթուրուոց կամ Եղիտաք նեւըրաց զոր բացարէ Ազաթանգեղ Տրի համար ըսելալ. « Երազացոյց երազ - » ընդհան պատօն Տիր դիք ո : Այս բանիս համար մեհենատեղին այլ կոչուեցա Երազամոյն. և զի մայրաքաղքին դրան քոյլ էր, ի հաւատալն Հայոց յԱստուած նշանարիտ, նախի և սա « արկեալ ձեռն քակեալ այրեալ ա - » երեալ քանդեցին . . ուր և երեւեալ կեր - » պարանօց զիւացն ի նմանութեան առն և » ձիոյ բազմութեան և կազմութիւն զնիի և » հետեւակազօր մինդաւոր և սունաւոր, ա - » սաջի ընթացեալը ի կերպարան մարդկան և նմանութեան, նիզակօր և նշանօց ի զէն և ի զարդ վասեալը, մեծաւ զոչելով զա - » զազակ հարեալը՝ փախստեայը յԱնահանա - » կան ի մեհեանն անկանէին, ուստի՝ ընդ և հասեալն մարտ եգեալ կառէին, նետս » անսյժմ և բարավէժո թանձրաթափ ի վե - » րուստ ի շինուածոցն ի խոնարհ զմարդկաւն

» ցնզէին. զոր փոքր սակաւ մի զարհուրեցու - » ցեալ զնորահաւատս մարդկանն : իսկ Ա . » Գրիգոր իրբեւ տեսեալ զայն նշան տէրու - » նական առնէր, և զմեալ ի դուռն մեհենին, » և ամենայն շինուածք մեհենին ի հիմանց » զդրեալ տապալեցան . . . և ամենայն զեւցն » ի փախուստ գարձեալ առաջի մարդկանն՝ ե - » րեւեցան զամիս արկեալ և զճակատս հա - » րեալ, և զմիկ քարձեալ մեծամայն գոյելով ասէին, թէ վայ մեզ. զի յամենայն եր - » կրէ փախստական արար զմեզ Յիսուս՝ որդին » Մարիամու . . . արդ ի յո՞ զմեալ փախի - » ցուց . . . երթամք մեք ի բնամիխ լերինն » կաւկաս : : Եւ զայս ասացեալ . . . սեւագունդ » զիւացն՝ աներեւացեք եղեալ չքոսեալը ի » տեղոյն՝ իրբեւ զծուի պակասեցան », և այն : Փօխանակ մարդկալերպ զիւաց՝ զիւա - կերպ մարդիկ խարեբայ քուրմեր ըսելս է փախչողներն, որոց զիզած գանձերն՝ աղբա - տաց և եկեղեցւ արուեցան. Երազացոյցն այլ երազի պէս ցնվեցաւ :

Նշանաւոր է մեր և Պարսից մէջ Տրի զիւաւթեան զիյ համարուելուն նման՝ Արսու - նաց այլ Տրի կամ Տրայ անսանեն զմուս. արդեօք կելտաց Դրուիդ Druide *, Ական - աինաւեանց Deroτ այլ, որ քանանա և զի - տուն նշանակեն, չե՞ն ծագեալ ի Տրեայ :

(Շարայարելի) .

* Զայս ոմանկ համարին ի Drow բառէ կամ Տերու, որ է կաղնի, իրր զի պաշտօնեալըն կաղնի ծառոց կամ անտառաց մէջ կենացին :

